

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

---

« 12 » մայիս 2023 թ No 2367 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/1369-23 առ 02.05.2023թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը փոխադարձ ճանաչելու ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 3 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝
  - 1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:
3. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Ա. Բաղդյանին՝
  - 1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 77-րդ և 180-րդ կետերի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

 Recoverable Signature

X 

---

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

ԵԱՏՄ (ԵԱՏՄ գրանցման փոխադարձ ճանաչում) ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	Եզրակացության համար (ԵԱՏՄ հայտի համար) և ամսաթիվ
1	Կավինտոն Կոմֆորտե	վինպոցետին	դեղահատեր բերանի խոռոչում լուծվող	10մգ; (30/2x15/) բլիստերում, (90/6x15/) բլիստերում	Գեդեն Ռիխտեր ԲԲԸ, Գյումրի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ	Հունգարիա	Գեդեն Ռիխտեր ԲԲԸ, Գյումրի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ	Հունգարիա	Դ	21344 (002614) 28.04.2023
2	Կավինտոն Կոմֆորտե	վինպոցետին	դեղահատեր բերանի խոռոչում լուծվող	10մգ; (30/2x15/) բլիստերում, (90/6x15/) բլիստերում	Գեդեն Ռիխտեր-ՌՌԻՍ ԲԸ, Լեսնայա փ. 40, Շուվոյե, Մոսկվայի շրջան, Եգորինսկի նահանգ, 140342-բայթ արտադրող, որակի և բաց թողնման հսկող, Գեդեն Ռիխտեր-ՌՌԻՍ ԲԸ, Լեսնայա փ. 43/5, Շուվոյե, Մոսկվայի շրջան, Եգորինսկի նահանգ, 140342, Ռուսաստան-փաթեթավորող	Ռուսաստան	Գեդեն Ռիխտեր ԲԲԸ, Գյումրի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ	Հունգարիա	Դ	21345 (002614) 28.04.2023
3	Հալիքսոլ	ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ)	դեղահատեր	30մգ; (20/2x10/) բլիստերում	Էզիս Ֆարմապյուտիկալ ՓԲԸ, 1165 Բուդապեշտ, Բոկենիֆոլդի փ. 118-120	Հունգարիա	Էզիս Ֆարմապյուտիկալ ՓԲԸ, 1106 Բուդապեշտ, Կերեստուրի փ. 30-38	Հունգարիա	ԱԴ	21346 (000988) 28.04.2023